

Հասարակաց սրարբեցութեան անտար-  
քեր մարդուն զէմբը յուզուեցաւ. յայտնի  
անձուկի և ուրախութեան մէջ էր:

Գնէլ նշմարեց որ դրասանգները յու-  
նարէն գիրեր կը կեղծէին. այս մտածու-  
թիւնը զինք հաճից. հրճուանքով մը փոր-  
ձեց ամրող խօսքը կարդալ. ճակատը  
խորչուեցաւ, չէր կրնար յառաջ երթալ.  
Բնչ լեզուով գորուած էր: իրեն ծանօթ  
յունարէնը չէր: Գնէլ քանի մը բոպէ մը-  
տածկու կեցաւ. և ահա զէմբը պայծա-  
ռացաւ և ուրախութեան բուռն հրճուան-  
քով մը ցցուց զայն ֆառանձեմի. յունա-  
րէն տառերով բայց հայերէն լեզուով  
գորուած էր կեցկ ֆնել, կեցի ֆառանձեմ:

Մայրենի լեզուն գրուած. Գնէլ զզաց  
որ պարսիկն ու հումայեցին կը դողային:  
Մեքենաբար աչքերը շուրջը դարձուց այս  
ճարտարը գտնելու, բայց շուրջը ամրոխը՝  
զինիէն ու բերկորութենէն յիմար՝ կը փո-  
թորկէր ու կը ծփար:

Անտարբեր մարդուն զէմբին վրայ, որ  
աչքէ չէր փախցներ ֆառանձեմի, անմա-  
հութեան նշոյներ փայլեցան:

Դղեակը լեզուեցաւ երգերով, ջահերով,  
ծաղկիներով, ծիծաղներով, պարերով, զի-  
նիներով:

Դղեակին վրայ երկինքը կապոյտ էր և  
աստղերը պայծառ:

Հ. Տ. Աւարտութեան

Շարայարելի

Լաւ է՝ լուռ կենալ՝ քան պարապ խօսիլ:

Ցոյսը մարդուս համար՝ ուտելու, խմելու և  
շնչելու շափ հարկաւոր բան մ'է. (Մանթէկած-  
ծա):

Պարկեշտութիւնը շրջանակ մ'է որ առաքինու-  
թիւնը փայլուն կը ցուցընէ. (Դիոգինէս):

Ա՛զ որ կ'աշխատի չի ձանձրանար: Աշխատու-  
թիւնը կ'ազնուացնէ և կը գուարթացընէ. ձան-  
ձրութիւնը կը մաշեցնէ և կը սպանէ:

Իշխանական տիտղոսները ուրիշ բան չեն՝ բայց  
եթէ մի քանի զանկեր աւելի տապահագրի մը  
համար. (Կղեմիս. Կի-):

Ո՛չ զոք քու կողմանէդ դատէ կամ դատաստա-  
նի կանչէ. (Ֆնելոն):

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՕՐԱԳԻՐ ԱՌԺԱՄԱՅՆ  
ԱԶԴՄԱՆՑ ՄՏԱՑ ԵՒ ՄՐՏԻ

1842

ՆՈՅԵՄԲԵՐ

1

Ամենայն ժամը հնչեալը մէն մի տառը  
են ժամանակի:

2

Սերմն փորիկ է խօսց արկեալ ի միտու,  
րուսուցանէ ծառս մեծամեծու:

3

Որ գետնախշտի մեռանի և որ յերի-  
զապատ գահոյ՝ նոյնօրինակ թողուն զի  
ցուրտ:

3

Ի յիշառակի մեռելոց թուի բանալ ա-  
մենայն զերեզմանաց, նաև և ամենայն սիրտ  
փորիկ ի գերեզման և գտանէ անդ զսի-  
րելիս իւր:

3

Են որոց ամենայն կեանը օրհասը են,  
մահ հանգուցանէ զնոսա:

5

Ընդ գարեւանդիւ ստուերախիտ բլույ  
երկու լուսազբերը, աչք ընդ յօնօց:

6 Յերագի

Ե և արշալուսոյն լոյս իւր:

6

Են հիւանդութիւնը սեփականը տիոց.  
այլ մահ ամենայն չափու հասակի պատ-  
կանի:

6

Ճ՛րագ՝ ի բարձրաւանդակի ոչ մերժէ  
զիւաւար ստորին. բազում և այսպէս  
խորհուրդը վաեմը:

6

Ցոյս բազում այն է զի պղպջակ է  
սնոսի. բազմաց տեսեալ զի սահի զմկա-  
նամբը՝ հաստատուն համարին, և նա իս-  
կոյն պայթի: